ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

17 ԱՊՐԻԼԻ 2023 թ.
№ 4 (1102)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

«Շախմատը կրթության մեջ՝ որպես ընդհանուր զարգացման ռեսուրս»

Ապրիլի 15-ին տեղի ունեցավ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանների կազմակերպած «Շախմատը կրթության մեջ՝ որպես ընդհանուր զարգացման ռեսուրս» խորագրով միջազգային առցանց գիտաժողովը:

Ուշադրության կենտրոնում էին շախմատի դասավանդման մեթոդներն ու տեխնոլոգիաները, շախմատը որպես ընդանուր զարգացման գործիք, շախմատի դասավանդման ոլորտում փորձի փոխանակումը և այլն:

Գիտաժողովին միացել էր 100-ից ավելի մասնակից աշխարհի տարբեր երկրներից, այդ թվում՝ Հայաստան, ՌԴ, Վրաստան, Ղազախստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Բելառուս:

Առցանց գիտաժողովը վարում էր հայտնի շախմատային մեկնաբան Եվգենի Աքարովը, որն այս օրերին գտնվում է Հայաստանում՝ ՀՊՄՀ-ում:

Պլենար նիստում գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը: Նա կարևորեց արտասահմանյան գործընկերների մասնակցությունը՝ ընդգծելով, որ կրթական համակարգում շախմատի ապագայի հանդեպ մասնագիտական հետաքրքրվածությունը և շախմատի միջոցով բանիմաց և բազմակողմանի զարգացած սերունդ կրթելու առաջնահերթությունը:

Ռեկտորը կարևորեց գիտաժողովում քննարկվող հիմնահարցերը և հույս հայտնեց, որ դրանք կօգնեն շտկումներ կատարել դասավանդման մեթոդիկայում, հոգեբանամանկավարժական տեսական հիմքերում և առաջարկվող մոտեցումները կկիրառվեն կրթական գործընթացներում:

Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի նախագահ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիտալի Ռուբցովը նշեց, որ չնայած շախմատը որպես պարտադիր առարկա վաղուց է ներառվել դպրոցում, բայց մասնագիտական շրջանակներն այսօր էլ բարձրացնում են հարցը, թե ի՞նչ չափաբաժնով և ինչո՞ւ է այն անհրաժեշտ կրթության ոլորտում:

Վիտալի Ռուբցովը նկատում է՝ խորագիրն արդեն իսկ հուշում էգ շախմատը, նախ և առաջ, ընդհանուր զարգացման ռեսուրս է, իսկ գիտաժողովն իր առջև խնդիր է դրել բացահայտելու՝ ինչպիսին է կրթական շախմատի ազդեցությունը, դիագնոստիկ և պրակտիկ կիրառության արդյունավետությունը տարբեր տարիքային խմբերի վրա, այդ թվում՝ նրանց ինտելեկտուալ զարգացման գործում:

Շախմատի ակադեմիայի նախագահ, ՀՊՄՀ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, գրոսմայստեր Սմբատ Լպուտյանն էլ նկատում է՝ կրթության ոլորտում փոփոխություններն արագ են կատարվումգթեպետ շախմատ առարկայի, նրա կարևորության մասին քննարկումները նոր են, սակայն կան շատ հարցեր, որ հետաքրքրում են աշխարհին, իսկ դրանց պատասխանները կարող են տալ նման գիտաժողովները:

Սմբատ Լպուտյանը հավելում է՝ կրթական շախմատում 16 տարվա փորձառությունը թույլ է տալիս պնդել, որ այն կարևոր է, անհրաժեշտ և արդյունավետ ապագայի համարգ«Այսօր շախմատն էլ ավելի է կարևորվումգ այն ամենուր է՝ նախադպրոցական կրթական հաստատությունից մինչև բուհ: Վստահ եմ, որ մարդիկ ապագայում կգնահատեն ոլորտը զարգացնելու մեր ջանքերը»:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին զեկուցումներով:

«ՀՀ կրթական համակարգում «Շախմատ» առարկայի դասավանդման հետազոտության մասին» զեկուցումը ներկայացրեց ՀՊՄՀ Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը: Պրոռեկտորն անդրադարձավ ՀՀ դպրոցներում «Շախմատ» առարկայի դասավանդմանը, վերապատրաստումներին, ինչպես նաև 2012 թվականից ՀՊՄՀ-ում ուսուցանվող «Շախմատի դասավանդման տեսություն ու պրակտիկա» առարկայի շրջանակներում կատարված հետազոտությանըգ «Վերանայվել է առարկայի յուրացման կրթական արդյունքներն ապահովող մեթոդական բաղադրիչը, մշակվել են ուսումնական պրոցեսում արդյունավետ անհատական և խմբային մեթոդների ներդրման հետ կապված մի շարք առաջարկներ»,-նշեց Մարիամ Իսպիրյանն ու անդրադարձավ շախմատային հմտությունների և անձնային հոգեբանական առանձնահատկությունների միջև կապին:

Գիտաժողովում ներկայացվեցին «Շախմատը ընդհանուր զարգացման համար» նախագծի հոգեբանախտորոշիչ աջակցության համակարգի զարգացման պատմությունը, նշանակությունը, դպրոցում շախմատի դասավանդման արդյունավետության կանխորոշիչ գնահատման հավանական գործիքակազմը, «դասական» և «խաղային» խմբերում շախմատի դասավանդման արդյունավետությունը:

Մասնակիցներն իրենց ելույթներում անդրադարձան նաև շախմատի ուսումնասիրման համատեքստում աշակերտների աշխատունակության դրսևորման առանձնահատկություններին, 21-րդ դարի հմտությունների վրա ուսուցման ազդեցությանը, Հայաստանում մշակված նախադպրոցական շախմատային նախագծերին և այլն:

Գիտաժողովն ընթացավ տեսանյութերի դիտմամբ, մասնագիտական ոլորտի ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ և ամփոփվեց կլոր սեղան-քննարկումով:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Մենք ձեզ հող չենք տա

Մենք ձեզ հող չենք տա,
Այստեղ կյանքեր կան,
Այստեղ մերոնք են հողին շաղախվել,
Մեր զինվորների սրբազան արյամբ
Հորիզոններն են կարմիրով վառվել:

Մենք ձեզ հող չենք տա,
Այստեղ վերքեր կան,
Այստեղ ոտքեր են ականով հատվել,
Այստեղ ոգեղեն մեր զավակների
Սուրբ հոգիներն են երկնքին փարվել:

Մենք ձեզ հող չենք տա,
Այստեղ երգեր կան,
Այստեղ սխրանքն է հույսեր հրկիզել,
Այստեղ՝ շարքերում, սերընդեսերունդ
Նահատակներն են լեգենդներ դարձել:

Դավիթ ՎԱՆՅԱՆ

Կրթությունը չի նախապատրաստում կյանքին. կրթությունն ինքնին կյանքն է:

ՋՈՆ ԴՅՈՒԻ

«Մանկավարժականը պետք է վերցնի ֆրանսերենի ուսուցիչների վերապատրաստման կարևորագույն դերը»,-

ասում է Գիյոմ Նարժոլեն

Հերթական հանդիպումը Մանկավարժականում Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան Մշակույթի և համագործակցության հարցերով խորհրդական Գիյոմ Նարժոլեի և Կրթական և համալսարանական հարցերով կցորդ Սելիեն Գերեի հետ էր: Քննարկման թեման ֆրանսերենի հիմնախնդիրներն էին:

Հանդիպման ընթացքում Գիյոմ Նարժոլեն խոսեց շուրջ 10 տարի իրենց կողմից իրականացվող կրթական ծրագրերի մասին՝ վստահեցնելով, որ ունեն նոր ծրագրեր, որոնք ուզում են իրականացնել հատկապես Մանկավարժական համալսարանի հետ համագործակցության միջոցով:

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան Մշակույթի և համագործակցության հարցերով խորհրդականը խոսեց ֆրանսերենի մակարդակն ու որակը բարձրացնելու հարցերի մասին, ներկայացրեց իր մտահոգությունները: Նրա կարծիքով լուրջ հիմնախնդիրներից մեկն այն է, որ մարզերի դպրոցներում դասավանդող ֆրանսերենի ուսուցուցիչները երբևէ չեն վերապատրաստվել, նաև չեն եղել Ֆրանսիայում:

Դեսպանատան ներկայացուցիչներին հայուրընկալած Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը ցավով նկատեց, որ Ֆրանկոֆոնիայի կազմակերպության անդամ Մանկավարժական համալսարանն արդեն 3 տարի ֆրանսերենի ուսուցիչ չի պատրաստում դիմորդներ չունենալու պատճառով: Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանն էլ փաստեց՝ մենք ֆրանսերենի բաժինը պահելու խնդիր ունենք:

Հայաստանում ֆրանկոֆիլ տրամադրվածությունն անգամ չի նպաստում ֆրանսերենի հանդեպ շահագրգիռ վերաբերմունքին, որ անգլերենն առաջնային է մեծ մասի համար որպես միջազգային լեզու:

Գործնական խոսակցություն ծավալվեց ֆրանսերենի գրավչությունը բարձրացնելու, դպրոցներում ու բուհերում ֆրանսերենի խորացման ուղիների շուրջ՝ մասնավորապես շեշտը դնելով լեզվի դասավանդման որակի վրա:

«Մեր նպատակն է զարգացնել և կատարելագործել ֆրանսերենի դասավանդումը Հայաստանում»,-ասաց Գիյոմ Նարժոլեն՝ հետաքրքրվելով՝ բուհը կարո՞ղ է վերապատրատումներ անել աշխատող ուսուցիչների համար՝ զարգացնելու նրանց լեզվական կարողությունները:

Պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանի կարծիքով խնդիրը միայն լեզվական գիտելիքները չեն, այլև դասավանդման մեթոդներն ու գործիքակազմը:

Ըստ նախնական համաձայնության՝ Մանկավարժական համալսարանը ձեռնամուխ կլինի 2024-2025 թթ.-ին ֆրանսերենի ուսուցիչների վերապատրաստմանը, իսկ մինչ այդ հաշվի կառնվեն թիրախային խմբերը, կարիքները, կադապտացվեն նոր դասագրքերով աշխատելուն:

Հայաստանում դասավանդող ֆրանսերենի 350 ուսուցիչներից շարունակաբար յուրաքանչյուր տարի կվերապատրաստվի 30- ից 40 ուսուցիչ: Այսպիսով, Մանկավարժական համալսարանի հետ էլ կսերտանա ֆրանսերենի ուսուցիչների կապը:

Գիյոմ Նարժոլեն համոզված է՝ Մանկավարժականը պետք է վերցնի ֆրանսերենի ուսուցիչների վերապատրաստման կարևոր դերը, որի արդյունքում կմեծանա լեզվի դերը, և դիմորդները կցանկանան դիմել ֆրանսերենի բաժին: Առաջիկայում Ֆրանսիայից փորձագետների պատվիրակություն կժամանի, որոնց հետ հանդիպումն ու քննարկումները կլինեն առավել կառուցվածքային, բովանդակային ու գործնական:

ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանն առաջարկեց վերոհիշյալ հիմնախնդիրների ու հարցերի շուրջ քննարկումն առաջիկայում վավերացնել պայմանագրով և սկսել ֆրանսերենի ուսուցիչների վերապատրաստումը:

Գրքի շնորհանդես

Բուհական հայալեզու դասագիրք՝ ուսանող-դասախոս երկխոսության նոր հնարավորություն

Մանկավարժական համալսարանի Գիտական գրադարանի ընթերցասրահում ապրիլի 12-ին կազմակերպվել էր Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների թեկնածու Սուսաննա Փիլոսյանի «Ընդհանուր հոգեբանություն» բուհական դասագրքի շնորհանդեսը: 2017 թվականին լույս տեսած, ապա 2019 և 2022 թվականներին լրամշակված բուհական ձեռնարկը հեղինակը դարձրել է բուհական դասագիրք:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը փաստեց՝ գիրքը վաղուց սպասված էր և՛ ուսանողների, և՛ դասախոսների համար: Խոսելով բուհական դասագրքի առանձնահատկությունների մասին՝ ռեկտորն ընդգծեց, որ դասագիրք գրելը բավականաչափ բարդ գործընթաց է, որովհետև այն ունի բոլոր ժամանակների համար հիմնարար, միաժամանակ ժամանակի առումով սահմանափակ մոտեցումներ: Ռեկտորը հիշեց այն ժամանակները, երբ սովորում էին օտարալեզու հեղինակի դասագրքով, որի հիմքում բուրժուական տեսություններն ու մոտեցումներն էին:

«Երկար տարիներ մեր բուհի ուսանողների համար հիմնարար և ամենապահանջված դասագիրքը Ալբերտ Նալչաջյանի դասագիրքն էր: Ես ուրախ եմ և հպարտ, որ այսօր, Մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Սուսաննա Փիլոսյանի շնորհիվ մենք ունենք հայալեզու նոր դասագիրք, որը ժամանակակից բոլոր հիմնարար պահանջներին բավարարում է, գիտելիքը մասնագիտական տիրույթում մատուցվում է հանրագիտարանային ընկալմամբ»,-ասաց ռեկտորը:

Ռեկտորն ընդգծեց Սուսաննա Փիլոսյանի հսկայական պատասխանատվությունը՝ արժեհամակարգի առումով, հոգեբանական գիտելիքի պահպանման տագնապները և որ պրոֆեսորի՝ մասնագիտական գիտելիքների փոխանցման հոգածությունն ու հիմնարար մոտեցումներն անկրկնելի են:

Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց պրոֆեսոր Սուսաննա Փիլոսյանին՝ փաստելով, որ դասագրքի ստեղծումը լավագույն հնարավորություն է ուսանող-դասախոս երկխոսության համար: Նա ուսանողներին հորդորեց՝ սովորել հենց այդ դասագրքով, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի «Ընդհանուր հոգեբանության» առաջին դասագրքով:

Ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանը բուհական դասագիրքը համարեց ֆակուլտետի մեծագույն ձեռքբերումը, իսկ այն ընթերցելը՝ մեծագույն հաճույք: Այս գիրքը սովորեցնում է սովորել և մտածել:

Հոգեբանական գիտությունների ➤4

ԲԱՅՑ ՀԱՐԱՏՈՒՆՔ, ՈՐ ԹԵԹԵԻ ԷՐ ԿԵԱՆՔԴ ՈՒ ԽՆԴՈՒՄ, ՍԻՐԵԼԻ՛ ՄԱՐՏԻՆ...

(յիշատակի խօսք)

Կեանքից անակնկալ հեռացաւ նա: Մի օր առաջ ընդունեց երկրորդ միջանկեալը բանասիրականի աւարտական լսարանում, տուն գնաց ուրախ տրամադրութեամբ, այն յոյսով, որ ուսանողները նոյն յաջողութեամբ կը յանձնեն պետականները: Թւում էր՝ Համալսարանի Պրոֆեսոր, բանասիրական գիտութիւնների դոկտոր Մարտին Գիլաւեանը կեանքն ապրում էր լիաբուռն ու լիասիրտ: Ուր մտնում էր, լսարան թէ ամբիոն, դեկանատ թէ Ակադեմիայի գրականութեան ինստիտուտ, վարակում էր զրոյցի անկաշկանդ ուղղութեամբ, անսպառ ժպիտով, մի գաւաթ սուրճի շուրջ՝ սրամիտ եւ դիպուկ նետուած խօսքով: Սիրուած էր համալսարանում: Բոլորը գիտէին, որ առերեւոյթ թեթեւ ու կենսախինդ էր դիմաւորում կեանքի կեռմանները: Ունէր հրաշալի ընտանիք, զաւակներ, թոռներ...:

Խնամքով բոլորից թաքցնում էր իրեն ներսից կոտտացնող ցաւը՝ երիտասարդ, շնորհալի որդու անակնկալ կորստեան մորմոքը վերջին տարիներին, որ ներքնապէս ու շատերի համար անտես հիւծում էր իրեն: Թերեւս հարազատների եւ շրջապատի համար դառնագոյն նոր անակնկալը եղաւ Մարտին Գիլաւեանի սրտի կանգը: Ո՞վ կը սպասէր: Թւում է՝ առաջին անակնկալի սպին դաւադիր արթնացաւ, որքան էլ այն կոյր հաւատն ունենային մերձաւորներն ու բարեկամները, թէ տոկուն է իրենց Մարտինի սիրտը: Ինչպէս յիշենք տերեւական խօսքը՝ իմաստաւորելով, թէ թեթեւ չէր անցնում մեր ընկերոջ կեանքը, ներքին տառապանքն էր նրա նոր օրերի ուղեկիցը:

Համալսարանում բարձր էին գնահատում Մարտին Գիլաւեանի անցած մանկավարժական եւ գիտական ուղին. այստեղ էր Սիւնեաց լեռնաշխարհից եկած պատանին կերտել իր նոր կենսագրութիւնը, ապրել իր յախուռն երիտասարդութիւնը՝ թողած կարմիր տանիքներով Գորիսը, գրել առաջին բանաստեղծութիւնը: Եւ երբ բաւական յապաղումով, 2002-ին հրատարակել էր այնքան սպասուած «Քեզ հետ եւ առանց քեզ» քերթողագիրքը, խոստովանել էր, թէ այն միայն սիրած աղջկան չէր ուղղուած, այլեւ ծննդավայրին, Լորագետին, Որոտանին, Զանգեզուրի կապոյտ քարափներին, նրա մարդկանց: Պատահական չէր տասնամեակներ ի վեր սիմվոլիստական գեղարուեստական մտածողութեան եւ առհասարակ բանաստեղծութեան գիտական ընկալման տիրական ներկայութիւնը Մարտին Գիլաւեանի զգացական ու իմացական բաւիղներում, որն էապէս խորացրել է տեսական դատումների զինանոցը, դարձել գրականագիտական հայեացք եւ ուսումնասիրութիւն, ուսանողներին անհրաժեշտ ձեռնարկ: Դրա վկայութիւնները մէկից աւելին են. յիշենք «Ռուսական սիմվոլիզմը եւ արեւելահայ պօէզիանե թեկնածուական» (1982) եւ «Նորագոյն շրջանի հայ պօէզիայի զարգացման միտումներն ու օրինաչափութիւնները» (1994) դոկտորական ատենախօսութիւնները, «Պօէզիան եւ ժամանակի շարժումը» (2003), «Վահան Տէրեանից Պարոյր Սեւակ ու մինչեւ մեր օրերը» (2017), «Սիմվոլիզմը հայ պօէզիայում» (2018) գրքերը եւ այլ ուսումնասիրութիւններ, յօդուածներ:

Նշենք նաեւ, որ Մարտին Գիլաւեանը խորը գնահատութեան էր արժանացել գիտամեթոդական ասպարէզում. բաւական է նշել այն բացառիկ դերը, որ նա ձեռք էր բերել համալսարանում՝ դառնալով եւ մինչեւ մահը քսան տարի անընդմէջ մնալով «Հայագիտական հանդէս»-ի հիմնադիր-խմբագիրը, որի գիտականութեան մակարդակը քանիցս ընդունել եւ ճանաչել է խստավարժ ԲՈԿ-ը: Հարկ է նշել, որ միայն դրանով, ի թիւս մեր հաստատութեան այլ ծանրակշիռ, անուն հանած գիտական պարբերականների, «Հայագիտական հանդէս»-ը անշեղօրէն բարձրացրել է աբովեանցիների գիտական վարկանիշը:

Մարտին Գիլաւեանը միշտ երիտասարդութեան հետ էր: Սխալուած չենք լինի՝ նշելով թերեւս ամենակարեւորը. հենց համալսարանում ձեռք էր բերել հմուտ դասախօս-մանկավարժի համբաւ անցեալ դարի 70-ական թթ. մինչեւ մեր այս օրերը: Նշենք կրթական ոլորտին բերած յիշարժան ծառայութիւնները. 1995-2011 թթ. նա բանասիրական ֆակուլտետի դեկանն էր, մինչեւ այսօր Վաչէ Պարտիզունու անուան հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի փոխառու Պրոֆեսոր, շուրջ կէս դար բանասիրական բաժանմունքում կարդացել է գիտամեթոդական տարաբնոյթ դասընթացներ՝ ռուս գրականութեան եւ հայ նորագոյն եւ նորանկախ շրջանների գրականութիւնների գծով, ղեկավարել հարիւրաւոր աւարտական աշխատանքներ եւ մագիստրոսական թեզեր: Աւելորդ չէ նշել, որ նրա ղեկավարած հմուտ մականի տակ տասնեակ ասպիրանտներ եւ հայցորդներ պաշտպանել են թեկնածուական ատենախօսութիւններ. յիրաւի, նա խորը յետագիծ է թողել նորահաս սերնդի գիտական հմտութիւնների ձեւաւորման ճանապարհին:

Մարտին Գիլաւեանը յարգուած էր ուսանողական տարբեր սերունդների շրջանում եւ գիտական հանրութեան մէջ, մնում էր սիրուած աւագ գործընկեր ամբիոնում եւ համալսարանական միջավայրում: Նրան խորապէս գնահատում էին նաեւ համալսարանից դուրս. ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտի գիտական խորհրդի եւ աստիճաններ շնորհող խորհրդի անդամ էր:

Բազմամեայ գիտամանկավարժական արդիւնաւոր գործունէութեան համար Մարտին Գիլաւեանը պարգեւատրուել էր ՀՀ վարչապետի, Հայաստանի գրողների միութեան պատուոգրերով, ԿԳՄՍ նախարարութեան, մեր հարիւրամեայ համալսարանի բարձրագոյն պարգեւներով, «Ֆրիտէոֆ Նանսէն» մեդալով:

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ
Վաչէ Պարտիզունու անուան հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ

«Ընտանիքում պետք է խաղաղություն լինի, կինն իրեն երջանիկ զգա իր օջախում, որպեսզի կարողանա նաև մարզական հաղթանակներ գրանցել»,-

ասում է ՀՊՄՀ դասախոս Լիլիթ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Լիլիթ Գրիգորյանը Մանկավարժական համալսարանի Շախմատի և սպորտի ամբիոնում դասախոսում է 2007 թվականից: 1991 թվականից նախկին ԽՍՀՄ սպորտի վարպետ է: Վերջերս նա հաղթեց «Վարչապետի գավաթ» մրցաշարում և սեղանի թենիս մարզաձևում գրավեց առաջին պատվավոր տեղը:
Կարծում ենք մեր ընթերցողներին, և, հատկապես ուսանողներին, կհետաքրքրի դասախոսի անցած մարզական ուղին. ստորև ներկայացնում ենք մեր հարցազրույցը ՀՊՄՀ Շախմատի և սպորտի ամբիոնի դասախոս Լիլիթ Գրիգորյանի հետ:

- Հարգելի տիկին Գրիգորյան, բոլորս ուրախացանք՝ իմանալով Ձեր մարզական հաջողության մասին: Մի փոքր կմանրամասնեք մրցաշարի մասին:

- Երկար տարիներ պրոֆեսիոնալ սպորտում եմ եղել, նախկին ԽՍՀՄ սպորտի վարպետ եմ: Նեղ մասնագիտությունս՝ սեղանի թենիս: Արդեն երկար տարիներ պրոֆեսիոնալ սպորտում չեմ և որոշեցի մասնակցել «Վարչապետի գավաթ» առաջնությանը: Մրցաշարը կազմակերպվում է տարբեր մարզաձևերից: Նախորդ տարի էլ էի մասնակցել: Եզրափակչում հաղթեցի վանաձորցի մի կնոջ և գրավեցի առաջին տեղը: Այս տարի փաստորեն ես դարձա կրկնակի չեմպիոն:

Այս տարի պայքարը բավականին համառ էր. ես եզրափակիչ էի դուրս եկել՝ մրցելու Հովեյան Սուսաննայի հետ, ով իմ դասախոսն է եղել: Թեժ պայքար ընթացավ. երկուսս էլ լավ մարզավիճակում էինք:

Պետք է ասել, որ մրցաշարը շատ հետաքրքիր է, և ես կուզեմ, որ շարունակական բնույթ կրի: Որովհետև սպորտը նախ առողջություն է, իսկ սեղանի թենիսը համարվում է մասսայական մարզաձև, և սիրողական մակարդակի խաղացողները շատ հետաքրքրված են այս մարզաձևով: Մրցաշարը սիրողական էր, մասնակիցներն էլ բավականին շատ էին: Ես արդեն 20 տարի պրոֆեսիոնալ սպորտում չեմ և համարվում եմ սիրողական խաղացող: Դե արդեն եզրափակչում հանդիպում են ուժեղագույնները, ես կասեի՝ նախկին պրոֆեսիոնալները:

- Ի՞նչ կպատմեք Ձեր մասին:

- Շատ փոքր տարիքից՝ 7 տարեկանից, մտել եմ «Սպարտակ» մարզական ակումբ, հայրս է երազել, որ ես զբաղվեմ սպորտով: Մարզիչս Ֆելիքս Սարգսյանն է: Ավելի քան 15 տարի եղել եմ պրոֆեսիոնալ սպորտում: 1991 թվականին դարձա ԽՍՀՄ սպորտի վարպետ: 1993 թվականին ընդունվել եմ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, որն ավարտելուց անմիջապես հետո աշխատանքի անցա Երևանի ճարտարապետաշինարարական ինստիտուտում որպես «Ֆիզիկական դաստիարակություն» առարկայի դասախոս: 10 տարի այնտեղ աշխատելուց հետո՝ 2007 թվականին, աշխատանքի անցա Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Առայսօր դասախոսում եմ Մանկավարժականում:

- Ինչպիսի՞ն է մեր ուսանողների ընդհանուր մարզավիճակը: Մարզական ի՞նչ հետաքրքրություններ ունեն, ի՞նչ եք անում սպորտը նրանց համար գրավիչ դարձնելու առումով:

- Եթե խոսքը վերաբերում է իմ մարզաձևին՝ սեղանի թենիսին, ասեմ, որ ուսանողները հետաքրքրված են: Ցավոք, պետք է ավելացնեմ, որ նրանք բավարար չափով չեն տիրապետում այդ մարզաձևին, և ես դասերի ընթացքում փորձում եմ ուսուցանել: Այդ մարզաձևից հատկապես թույլ են աղջիկները: Իմ առջև խնդիր եմ դրել սովորեցնել նրանց այս մարզաձևը, որովհետև այն մասսայականություն վայելող մարզաձև է. բոլոր հանգստյան տներում, խաղահրապարակներում կա սեղանի թենիս, և շատ թե քիչ պետք է տիրապետեն: Տղաներն ինչ-որ չափով կարողանում են խաղալ, իսկ աղջիկները թույլ են: Բուհի ծրագրում մարզաձև ընդգրկված է: Այս կիսամյակում ես մի քանի դասընթաց նվիրելու եմ սեղանի թենիս մարզաձևին, իսկ մյուսը ուսումնական տարվանից ավելի եմ խորացնելու ուսուցումը:

- Ինչպիսի՞ն է ուսանողների մասնակցությունը ֆիզկուլտուրայի դասերին:

- Արդեն շատ են ակտիվացել դասերին, ծուլացողներ էլ կան, բայց եթե տոկոսային հարաբերությամբ նշենք՝ ֆակուլտետների ուսանողների 90 տոկոսը հաճախում է դասերին:

-Դասերի անցկացման ի՞նչ նորարարական մեթոդներ եք կիրառում:

- Այո, այժմ փորձում եմ ժամանակակից մեթոդներ կիրառել՝ շնչառական վարժություններ, աերոբիկա, ֆիտնես... որպեսզի ուսանողներին հետաքրքրի: Կյանքը շատ արագ զարգանում է, և հնացած մեթոդներն այլևս չեն հետաքրքրում ուսանողներին: Պետք է անցկացնել ժամանակակից դասեր՝ երաժշտության ներքո, որն ընտրում ենք յուրաքանչյուր վարժությանը համապատասխան:

Նոր ուսումնական տարում կընդգրկենք շատ նոր մարզաձևեր, որոնք մասսայականություն են վայելում: Ես գտնում եմ, որ ուսանողները պետք է պարտադիր տիրապետեն դրանց:

- Մեր բուհի մարզադահլիճը և մարզական գույքը բավարարո՞ւմ են ժամանակակից դասեր անցկացնելուն:

- Գույքի հետ կապված որևէ խնդիր չունենք: Պարզապես ունենք մեկ մարզադահլիճ, միայն դա է խնդիրը. մարզաբաձաներն են մեր պակաս, իսկ մարզագույքի պակաս առհասարակ չունենք:

- Միջբուհական և ներբուհական մրցումներին ուսանողների մասնակցության մասին ի՞նչ կասեք:

- Յուրաքանչյուր տարի երկու անգամ տարբեր մարզաձևերից գարնանային և աշնանային մրցումներ են անցկացվում՝ մեկը ԿԳՄՍ-ի, մյուսը՝ Ուսանողական մարզական ֆեդերացիայի կողմից: Մեր բուհը միշտ ակտիվ մասնակցություն է ունեցել, հատկապես վոլեյբոլից մշտապես առաջնային տեղեր ենք գրավել և հաղթող ճանաչվել՝ եզրափակիչ դուրս գալով ուժեղագույն թիմերի հետ: Ունեցել ենք նաև բասկետբոլի, սեղանի թենիսի, մինի ֆուտբոլի թիմեր: Հատկապես աղջիկների մինի ֆուտբոլի՝ ֆուտզալի, ուժեղ թիմ ենք ունեցել մարզիչ Սուրեն Բարսեղյանի օրոք:

Առաջիկայում հրավիրելու ենք վոլեյբոլի մասնագետ, որ աշխատի մեր վոլեյբոլի թիմի հետ, որպեսզի չզիջենք մեր առաջնային դիրքերը: Միաժամանակ կփորձենք զարգացնել սեղանի թենիսը: Այս մարզաձևը վատ վիճակում է, որովհետև դպրոցներում համապատասխան սեղաններ չկան, գույքն էլ թանկ է, և ոչ բոլոր դպրոցներն են կարողանում ձեռք բերել: Իսկ եթե դպրոցներում քիչ թե շատ տիրապետում են մարզաձևին, այստեղ մասնագետը մի քիչ աշխատում է, և ուսանողն արդեն կարողանում է մասնակցել առաջնությունների:

- Ուսանողական խորհուրդը, որքան գիտեմ, օգնում է մրցումների կազմակերպմանը:

- Այո, ուսանողական խորհուրդը օգնում է ներֆակուլտետային, ներբուհական մրցումների կազմակերպմանը: Ակտիվ են ուսանողները, որովհետև սիրում են սպորտը:

Ցավոք, վերջին տարիներին մեր ազգը մի փոքր նահանջ է ապրել սպորտի առումով: Դա շատ կարևոր է նախ առողջության համար: Ես միջին տարիքում եմ հիմա գտնվում, բայց լավ մարզավիճակում եմ, որ կարողացա Հայաստանի մակարդակով գրավել առաջին տեղը: Ես ամեն օր 4-5 ժամ մարզվում եմ, որ մարզավիճակս բարձր պահեմ:

- Շնորհավորում եմ սեղանի թենիս մարզաձևում 1-ին տեղը գրավելու և գումարային մրցանակի արժանանալու առթիվ. դա պատիվ է նաև մեր համալսարանի համար:

Ի՞նչ կմաղթեք մեր բուհի ուսանողներին և աշխատողներին: Ինչպիսի՞ն կուզենայիք նրանց տեսնել:

- Ամենակարևորը նրանց բոլորին կուզեի տեսնել առողջ, իսկ առողջությունը հենց այնպես չի տրվում: Առողջությունն առաջին հերթին կախված է յուրաքանչյուրի ապրելակերպից, թե ինչպես է նա իր օրն անցկացնում, ինչպես է ապրում:

Ֆիզկուլտուրան, սպորտը մեծ դեր ունեն առողջության հարցում. ինչպես ես սնվում, ինչպես ես ապրում. չէ՞ որ առողջությունը 90 տոկոսով դրանով է պայմանավորված, մյուս 10 տոկոսն է միայն պայմանավորված ժառանգականությամբ:

Ես կոչ եմ անում բոլորին՝ եթե չզբաղվեն ֆիզկուլտուրայով, գոնե առավոտյան մարմնամարզությամբ պարտադիր զբաղվեն, որովհետև առողջությունը հենց այնպես չի տրվում:

Մեր դասախոսներին և ուսանողներին, աշխատողներին և առհասարակ մեր հասարակությանը մաղթում եմ, որ կարողանան իրականացնել իրենց բոլոր նպատակներն ու ձգտումները, միշտ առաջինը լինեն, ինչպես սպորտում ես կարողացա լինել:

- Իսկ ի՞նչ է առհասարակ պետք կնոջը երջանիկ լինելու համար... Բացի մարզական առաջին հարթակներում կանգնելուց...

- Ընտանիքում պետք է խաղաղություն լինի, կինն իրեն երջանիկ զգա իր օջախում, որպեսզի կարողանա նաև մարզական հաղթանակներ գրանցել:

Հավելեմ՝ երիտասարդ մնալու և երջանիկ լինելու համար ես պարտական եմ նաև սպորտին:

Հարցազրույցը՝
Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Համալսարանում նշեցին Սուրբ Զատկի տոնը

Մանկավարժական համալսարանի Ուսանողական խորհուրդը սիրով է կազմակերպում եկեղեցական տոներին նվիրված տարբեր ձեռնարկներ: Զատիկը հայ ժողովրդի սիրելի տոներից է: Ապրիլի 12-ին ուսանողների նախաձեռնությամբ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի սրահում նշվեց Քրիստոսի Հարության տոնը: Զատկական գունագեղ սեղանը պատրաստվել էր համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև ավագ դպրոց-վարժարանի սովորողների ճաշակով ու մտահղացմամբ: Ներկած ձվերով, անուշեղենով ու «Քրիստոս հարյավ ի մեռելոց»՝ տոնի ավետիսով դիմավորեցին բուհի ղեկավարությանը, դասախոսներին և հյուրերին:

Ուսանողները խնամքով էին նախապատրաստվել տոնին. բոլոր ձեռնարկները խորհրդանշական էին. այն ուղեկցվեց «Ուրֆա» համույթի ծիսական երգ ու պարով, խաղերով, տոնին վերաբերող մեկնաբանություններով, Մեծ պահքի ծիսական տիկնիկ Ակլատիզի և Ծաղկազարդի տոնի Նուրիի «մասնակցությամբ»: Վերջիններս գարնան զարթոնքն էին մարմնավորում՝ շուրջը սփռելով գարնանային բույր ու թարմություն:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց ուսանողների մասնակցությունը Հայ Առաքելական եկեղեցու տոներին, ազգային ավանդույթների պահպանման բոլոր դրսևորումները՝ դրվատանքի խոսքեր հղելով նրանց՝ ստեղծագործ մտքի ու վառ երևակայության դրսևորման համար:

«Դպրոցը սկսվում է ընտանիքից»,-

ասում է Նոր Հաճնի ավագ դպրոցի տնօրեն **ԿԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ**

- Տիկին Գևորգյան, ներկայացեք, խնդրեմ:

- Կարինե Գևորգյան: Ծնունդով Լոռու մարզի Վանաձոր քաղաքից եմ: Ավարտել եմ Վանաձորի Ավ. Իսահակյանի անվան № 2 միջնակարգ դպրոցը, նույն տարում ընդունվել եմ Վանաձորի պետական մանկավարժական համալսարանի Տարրական ուսուցման մեթոդիկայի ֆակուլտետը: Հետագայում հեռակա ուսուցմամբ ավարտել եմ նաև ԵՊՀ-ի Սոցիալական մանկավարժության ֆակուլտետը:

1996թ.-ից Նոր Հաճնի ավագ դպրոցում աշխատել եմ նախ որպես տարրական դասարանների ուսուցիչ, այնուհետև ԴԱԿ, սոցմանկավարժ: 2014-2018 թթ.-ին Արզականի Խ. Խաչատրյանի անվ. միջնակարգ դպրոցում զբաղեցրել եմ տնօրենի պաշտոնը, ապա 2018 թ.-ից առ այսօր Նոր Հաճնի ավագ դպրոցի տնօրենն եմ:

- Հե՞շտ է արդյոք լինել դպրոցի տնօրեն:

- Դպրոցի տնօրեն լինելը բարդ և պատասխանատու աշխատանք է: Առավել ևս այն պարագայում, երբ այն ավագ դպրոց է: Այստեղ մեր աշխատանքը բազմապատկվում է՝ ապահովել սովորողների գիտելիքների՝ չափորոշչով նախատեսված անհրաժեշտ նվազագույնը, մեծագույն պատասխանատվություն կրել սովորողների անվտանգության, առողջության, սոցիալական հավասարության պահպանման, վատ սովորությունների զերծ պահելու, մասնագիտական ճիշտ կողմնորոշման և շատ այլ հարցերի շրջանակներում:

- Որո՞նք են մերօրյա հանրակրթական դպրոցի հիմնախնդիրները:

- Այսօր մերօրյա դպրոցում տեղի է ունենում բարեփոխումների մեծ շրջափուլ: Փոփոխության է ենթարկվել կրթության հիմնարար, կարևորագույն փաստաթուղթը՝ «Հանրակրթության պետական չափորոշիչը»: Ամենակարևորը՝ յուրացնել ՀՊՉ-ն, մեծ ուշադրություն դարձնել հենքային ուսպլանին, առարկայական ծրագրերին և գնահատման նորմերին ու ձևերին:

Այսօր դպրոցներում կա նաև կադրային լուրջ խնդիր: Բազմաթիվ դպրոցներ ունեն ուսուցիչների պակաս: Կարծում եմ անհրաժեշտություն կա բարձրացնել Մանկավարժական համալսարանի գրավչությունը՝ հատկապես բնագիտական առարկաների, ինֆորմատիկայի և ռուսաց լեզվի ֆակուլտետներում:

Խնդիրներն, իհարկե, շատ են, բայց ես անդրադարձա ավելի գլոբալ խնդիրներին:

- Ինչի՞ց է սկսվում դպրոցը:

- Ինչքան էլ տարօրինակ թվա որոշ ընթերցողների համար, բայց պետք է նշեմ, որ դպրոցը սկսվում է ընտանիքից: Ընտանիքից է յուրաքանչյուր սովորող ստանում հիմնարար դաստիարակություն, ինչն էլ հետագայում նպաստում է դպրոցում հեշտ հարմարվելուն, ճիշտ հարաբերվելուն և առավելագույն գիտելիքներ ստանալուն:

- Ուսուցչի հեղինակության ու կարգավիճակի վերականգնման Ձեր տարբերակը:

- Իմ կարծիքով ուսուցչի հեղինակությունն այսօր շատ է վտանգված:

Որակավորում և հեղինակություն ունեցող ուսուցիչը նա է, ով ունի գիտելիք և պատրաստ է ուսուցանել այդ գիտելիքը երեխային, ով պատրաստ է իր վրա վերցնել պատասխանատվություն վաղվա սերնդի, հասարակության, անհատի կայացման, մեր երկրի ապագան կերտելու համար:

Նախ ասեմ, որ ուսուցչի հեղինակության անկման երկու գլոբալ պատճառ եմ տեսնում:

Առաջինը՝ տեխնոլոգիաների զարգացումն է, որոնք շատ ավելի մեծ ազդեցություն է գործում սովորողների վրա, քան ուսուցիչները: Սոցիալական ցանցերը, ինտերնետը, տեսանյութերը մարդու ուղեղի շատ ավելի մեծ հատվածներ են ակտիվացնում, քան դասագիրքը և ուսուցչի խոսքը: Եթե նախկինում գիրքը, դասագիրքը, ուսուցչի խոսքը երեխային գիտելիք տալու միակ միջոցն էին, ապա այսօր հայտնվել են ավելի ազդեցիկ միջոցներ: Սա նշանակում է, որ ուսուցիչներն այլևս չունեն սովորեցնելու մենաշնորհ և ՏՀՏ-ների հետ հայտնվել են մրցակցության մեջ:

Ուսուցչի հեղինակության անկման երկրորդ պատճառն այն է, որ ուսուցիչների ֆինանսական վիճակը, մեծ առումով, չի բարելավվում: Ուսուցչի աշխատանքը տարեցտարի դժվարանում է, բայց ֆինանսական փոխհատուցումը մնում է ցածր: Իհարկե, կրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները ենթադրում են այս առումով բարեփոխումներ (օրինակ՝ կամավոր ատեստավորումը, տարակարգը և այլն), բայց այն հասանելի չէ բոլոր ուսուցիչներին և, այնուամենայնիվ, կորչում է գրավչությունը այս կարևորագույն մասնագիտության նկատմամբ:

Ահա այս խնդիրների լուծման մեջ եմ տեսնում ուսուցչի հեղինակության բարձրացումը:

-Ո՞րն է տնօրեն-ուսուցիչ-աշակերտ-ծնող շղթայի ամենաթույլ օղակը:

- Այս շղթան շատ ամուր կապ է ենթադրում և սրանցից որևէ մեկի թույլ լինելը կամ թուլանալը անկում է ենթադրում: Սովորողի համակողմանի կրթությունը և դաստիարակությունն ապահովելու համար պետք է շատ ամուր գործեն բոլոր օղակները, պետք է համագործակցեն և լրացնեն միմյանց: Ամեն դեպքում, այս շղթայի կարևոր շահառուն աշակերտն է, և բոլորիս գործողությունները պետք է ուղղված լինեն նրա կարիքները բավարարելուն:

- Ի՞նչ հետաքրքիր գործերով է աչքի ընկնում Ձեր ղեկավարած դպրոցը:

- Արդեն հինգ տարի է՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Նոր Հաճնի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենն եմ և իմ ղեկավարած դպրոցի կարևորագույն խնդիրն ու նպատակը համարում եմ շրջանավարտին ինքնուրույն կյանքին պատրաստելը, սովորեցնել դիմագրավել կյանքի մարտահրավերներին: Ուստի, կարևոր հիմնասյուն եմ համարում աշակերտին մասնագիտական կողմնորոշում տալը, և այս առումով մեր դպրոցում մեծ աշխատանք է տարվում: Մենք համագործակցում ենք տարբեր բուհերի, ուսումնական հաստատությունների հետ, այցելում ենք բուհեր, ծանոթանում ենք ֆակուլտետներին և վերլուծում դրանց արդիականությունը մեր օրերում:

Բավականին ակտիվ է նաև արտադասարանային և մշակութային կյանքը: Բոլոր էքսկուրսիաները նպատակային են ու բազմազան՝ թանգարաններ, թատրոն, օպերա, բալետ, կինո և այլն, բոլոր միջոցառումներն ուղղված են հայրենաճանաչմանը, հայ ժողովրդի ստեղծած հոգևոր և նյութական արժեքների, գիտության, արվեստի, արհեստի և հայի ինքնության ճանաչմանը:

- Ուրիշ ինչի՞ մասին կուզեիք խոսել:

- Ես նախ և առաջ ուսուցիչ եմ և միշտ առաջնորդվել եմ Լև Տոլստոյի հետևյալ հայտնի խոսքերով. «Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը, նա լավ ուսուցիչ կլինի: Եթե ուսուցիչը սիրում է աշակերտին, ապա նա ավելի լավ ուսուցիչ կլինի, քան նա, ով կարդացել է բոլոր գրքերը, բայց չի սիրում իր աշակերտին: Եթե ուսուցիչը սիրում է և՛ իր աշխատանքը, և՛ իր աշակերտին, նա կլինի կատարյալ ուսուցիչ»:

Ես շատ եմ ուզում, որ իմ ղեկավարած դպրոցի բոլոր ուսուցիչները կատարյալ լինեն, քանզի ուսուցչի ձեռքերում է մեր երկրի ներկան և ապագան: Ուստի պետք է համախմբվենք, միահամուռ ուժերով լծվենք լուսավոր ապագա կերտելու գործին ու առաքելությանը:

Հարցազրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Բուհական հայալեզու դասագիրք...

➢2 թեկնածու, դոցենտ, Ս. Փիլոսյանի հայցորդ Աննա Առաքելյանը ներկայացրեց հեղինակի հարուստ կենսագրությունը, գիտահետազոտական հետաքրքրությունների առանցքային խնդիրներն ու շրջանակները, իսկ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, նույնպես հեղինակի հայցորդ Անի Ավագյանը հանգամանորեն խոսեց դասագրքի բովանդակային ու կառուցվածքային առանձնահատկությունների, գիտական ղեկավարի՝ Մանկավարժական համալսարանում ավելի քան կեսդարյա գործունեության, հոգեբանական գիտության և մանկավարժական կրթության զարգացման մեջ ունեցած մեծ ավանդի մասին:

«Դասագիրքը գրված է հոգեբանության տեսական և գործնական ժամանակակից ձեռքբերումների հիման վրա, հոգեբանության տեսության բոլոր հիմնարար բաժինները ներկայացված են պարզ ու մատչելի գիտական լեզվով, ինչը շատ կարևոր է ուսուցման գործընթացի համար»,-ասաց Ա. Ավագյանը:

Հոգեբանական գիտությունների թեկնածու, բուհական դասագրքի գրախոս պրոֆեսոր Ռուբեն Աղուզումցյանը նկատեց՝ հեղինակը նորովի է մատուցել դասագիրքը, այն իրապես տարբերվում է հոգեբանության մյուս դասագրքերից, կարդում ես գիրքը, և միտքդ աշխատում է: Նա հեղինակին անվանեց ունիկալ երևույթ ոլորտում, ում բարությունն անսահման է, իսկ բարությունն է ստեղծում մարդու բարոյականության հիմքը:

ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, հոգեբանական գիտությունների դոկտոր Կամո Վարդանյանը շուրջ քառորդ դար աշխատում է Սուսաննա Փիլոսյանի հետ, ճանաչում նրան որպես մարդ և դասախոս: Կ. Վարդանյանի կարծիքով՝ նա էմպատիկ անձնավորություն է, ով բազմաթիվ լավ հատկանիշներից զատ, նաև մշտապես կարողանում է ամենատարբեր կոնֆլիկտների ժամանակ պահպանել հանդուրժողականություն:

Գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը վկայեց՝ հոգեբանության հայալեզու բուհական նոր դասագիրքը ուսանողների կողմից ամենաընթերցվողներից է:

Դասագրքի հանդեպ ուսանողների վերաբերմունքն արտահայտեց մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Մարիամ Գևորգյանը և շնորհակալություն հայտնեց արժեքավոր գրքի ստեղծման համար:

Հանդիպումն ամփոփեց հեղինակը՝ պրոֆեսոր Սուսաննա Փիլոսյանը, ով իրեն հատուկ համեստությամբ ու զսպվածությամբ ասաց, որ դասագիրքը ծնվել է իր և Մանկավարժական համալսարանի համագործակցությամբ:

«Ես Մանկավարժականի ծնունդ եմ, և պետք է ասել՝ Մանկավարժականը խթանել է իմ ամբողջ գործունեությունը»:

Մնում է ասել՝ պրոֆեսորը դասագիրքը գրել է ուսանողներին մատչելի ու դյուրին լեզվով, դասախոսությունների ընթացքում բացահայտել նրանց առավել հասկանալի հատվածները, բարդ հասկացությունները հանել: Դասագրքի նյութերն էլ ընտրելիս բծախնդրորեն հաշվի է առել հոգեբանության ժամանակակից հայեցակարգերը:

Ներկաները շնորհավորեցին հեղինակին նաև ծննդյան օրվա առթիվ՝ ուսանողներին մաղթելով գիտելիքների ձեռքբերման բեղուն ճանապարհ նոր դասագրքի հետ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Հանդիպում համալսարանում

Ապրիլի 4-ին Մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում հյուրընկալվել էին Աբովյանի Ն. Վանյանի անվան № 5 հիմնական դպրոցի աշակերտները՝ դպրոցի տնօրենի տեղակալ, հոգեբան Աստղիկ Շահնազարյանի ղեկավարությամբ:

Ի դեպ, վերջինս Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիալական մանկավարժության ֆակուլտետի շրջանավարտ է, ով գերազանցությամբ է ավարտել ֆակուլտետը՝ ստանալով հոգեբան-մանկավարժի որակավորում:

Աշակերտները հանդիպեցին «Հոգեբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողների հետ, որոնք աշակերտների համար գաղտնազերծեցին հոգեբան մանկավարժի գործունեությունն ու նպատակները: Ծավալվեց ակտիվ քննարկում իրենց հուզող հարցերի շուրջ: Այնուհետև աշակերտները շրջեցին համալսարանում, ծանոթացան բուհի կառուցվածքային ստորաբաժանումներին, այցելեցին ՀՊՄՀ գիտական գրադարան և համալսարանի պատմության թանգարան:

Մանկավարժից դեպի աստղագետ

Դպրոցական դասասենյակից դեպի աստղազարդ երկինք տանող ճանապարհն ունի իր գեղեցկությունները և միաժամանակ մի շարք դժվարություններ: Մանկավարժ դառնալու նպատակս ծնվել է մանկության տարիներին, երբ ցատկապարանով խաղալու փոխարեն խաղում էի իմ հորինած խաղը, որտեղ ես ուսուցչուհին էի, իսկ ընտանիքիս անդամները՝ իմ աշակերտները: Եվ հիմա ամեն անգամ դասասենյակ մտնելուց և դաս վարելուց առաջ հիշում եմ այդ ուրախ օրերը, հիշում եմ իմ մանկության երազանքը, որն այսօր իրականություն է դարձել:

Աստղագետ դառնալու նպատակս ծնվեց, երբ ընդունվեցի համալսարան: Հավանաբար մինչ այդ վախեցել եմ այդ նպատակի մասին մտածել և բարձրաձայնել: Նպատակիս հասնելու առաջին քայլերն արեցի համալսարանում, իսկ աստղագետների հետ պարբերաբար հանդիպումներից հետո հասկացա, որ ճիշտ ճանապարհ եմ ընտրել: Եթե մյուս գիտությունները հնարավորություն են տալիս կատարել չափումներ, փորձեր, ուսումնասիրել երևույթներ, որոնք մեզ շատ մոտ են, ապա աստղագիտությունը գիտություն է, որտեղ ուսումնասիրվող երևույթները և օբյեկտները մեզնից բավականին մեծ հեռավորություն ունեն: Աստղագիտության գեղեցկությունը հենց այստեղ է երևում:

Միաժամանակ զբաղվել մանկավարժությամբ և գիտությամբ՝ բարդ է, իսկ այդ երկուսի համադրությունը՝ բավականին գեղեցիկ և յուրօրինակ: Գիտությամբ զբաղվելը հնարավորություն է տալիս պատասխանել մի շարք հետաքրքիր հարցերի, իսկ մանկավարժությունը՝ այդ հարցերի պատասխանները մյուսներին փոխանցել: Եվ որպես մանկավարժ ես այսօր ունեմ իմ առաջ դրված մի մեծ խնդիր՝ հետ բերել սերը դեպի գիտությունը: Եվ այսօր, եթե հարցնեն, թե ո՛ր մասնագիտությունն է ինձ համար առաջնային ու հոգեհարազատ, ես կպատասխանեմ՝ երկուսի համադրությունը:

Որպես աստղագետ ես դեռ մի մեծ տիեզերք ունեմ բացահայտելու...

Վարդուհի ՄԿՐՏՉՅԱՆ

«Մենք նման ենք սովորական մարդկանց, բայց մի քիչ տարբեր ենք»

Ապրիլի 2-ը նշվում է որպես աուտիկների համաշխարհային օր: Այս առիթով Մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետը նախաձեռնել է ապրիլյան միջոցառումների շարք: Առաջին միջոցառումը՝ «Աուտիզմ և արվեստ» խորագրով, անցկացվեց Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնում: Կենտրոնի և համալսարանի համագործակցությամբ համատեղ կազմակերպված միջոցառումը հագեցած էր տարաբնույթ օրակարգով:

Բացման խոսքով հանդես եկավ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հայկուհի Ադամյանը. «Աուտիզմով երեխաները շատ հաճախ արտահայտվելու խնդիր ունեն և արվեստի միջոցով ինքնարտահայտվելը լավագույն ձևն է նրանց համար»:

Հայկուհի Ադամյանը հավելեց, որ նման երեխաներից յուրաքանչյուրին պետք է անհատական մոտեցում ցուցաբերել, իսկ հասկանալու համար նախ պետք է նրանց ճանաչել, որովհետև աուտիզմը ոչ միայն տվյալ մարդու, այլև շրջապատող մարդկանց խնդիրն է:

Բանախոսը հավելեց, որ մշակույթի շատ հայտնի ներկայացուցիչներ աուտիզմ են ունեցել, նրանք արվեստի միջոցով են արտահայտվել, հաղորդակցվել հանրության հետ:

Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դասախոս Սևադա Սարգսյանը հանդես էր եկել ողջունելի նախաձեռնությամբ. նրա երկու տասնյակից ավելի գեղանկարչական աշխատանքները երկու ամիս կցուցադրվեն կենտրոնում:

«Արվեստը հաղորդակցման անփոխարինելի գործառույթ ունի»,-ասաց մ.գ.թ., դոցենտ Սևադա Սարգսյանը, իսկ ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը վստահեցրեց՝ միայն արվեստի միջոցով կարելի է հասնել խաղաղության:

ՀՊՄՀ դասախոս, պրակտիկ մասնագետ Ալվինա Հայրապետյանը ներկանների համար գաղտնազերծեց հոգեբանական ախտորոշման հիմունքները արտթերապիայի միջոցով: Ձեկուցման մեջ նա հանգամանորեն անդրադարձավ նկարչաթերապիայի մեթոդին՝ ընդգծելով, որ միայն որակական և պրոյեկտիվ կողմերի միջոցով է հնարավոր ռեալ գնահատել երեխայի նկարն ու վարքագիծը: Դասախոսը տարբեր մոդելներով վերլուծության ենթարկեց երեխաների նկարները՝ ընդգծելով, որ աուտիկների մոտ հիմնականում խոսքային խանգարումներն են, ուստի նրանց հնարավոր չէ գնահատել խոսքային մեթոդներով: Այստեղ օգնության են հասնում ոչ վերբալ ինքնարտահայտման միջոցները, այդ թվում՝ նկարչական հոգեբանական ախտորոշման ձևերը: Վաղ հասակից այս մեթոդով կարելի է հասկանալ երեխայի զարգացման փուլերն ու ձեռք բերած կարողությունները: Ձեկուցողը խնդրին մոտեցավ նաև սովորական և աուտիկ երեխաների նկարչական աշխատանքների առանձնահատկությունների բացահայտմամբ:

Հանդիպումը հագեցած էր բազմաբնույթ նախաձեռնություններով. նախ Մանկավարժական համալսարանի ուսանողները ներկաներին ընդգրկեցին աուտիզմի մասին գիտելիքներն ստուգող խաղի մեջ՝ 3 հաղթողի պատվոգրերի արժանացնելով, ապա ելույթ ունեցավ կենտրոնի «Միասին» թատերախումբը, որը հանդես եկավ «Նման ենք մենք իրար՝ ես ու դու» ներկայացմամբ: Երեխաները բարձրաձայնեցինգ «Մենք ձեզ նման սովորական մարդիկ ենք, բայց մի քիչ տարբեր...», իսկ Լիանայի ստեղծագործությունը, որ կատարեց կիթառով, օրվա թեմային համահունչ էր և հուզիչ:

Ամփոփումը ևս յուրահատուկ էր. ներկաների համատեղ ջանքերով ստեղծվեց Սևադա Սարգսյանի նկարներից մեկի նմանօրինակը:

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դեկանի տեղակալ Սուսաննա Մուրադյանը և կենտրոնի տնօրեն Հայկուհի Ադամյանը ևս մեկ անգամ ընդգծեցին, որ միջոցառումը իրազեկելու նպատակ ուներ, որ պետք է հասկանալ՝ ինչ է աուտիզմը, և որ արտթերապիան աուտիկների ինքնարտահայտման լավագույն միջոցն է:

Սիլվա ԱՍՐՅԱՆ



Տպավորություններ Սևադա Սարգսյանի «Վիրավոր ծառեր» ցուցադրությունից

Օրերս Մանկավարժական համալսարանում կայացավ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի նկարիչների միության անդամ Սևադա Սարգսյանի «Վիրավոր ծառեր» խորագիրը կրող ցուցադրությունը, որտեղ պատերազմական և բնապահպանական թեմաներով ներկայացված էր 35 աշխատանք:

Ցուցադրվող ստեղծագործությունների շարքը ծնվել է 44-օրյա պարերազմից: Ներկայացվելիք աշխատանքներից իրենց տեսակով առանձնանում են «Վեհը», «Խաղաղ օր», «Մասրենին», «Ես կանգուն եմ» ու ևս մի քանի կտավներ, որոնք իրենց բարոյահոգեբանական ընկալումներով ինքնատիպ գործեր են: Աշխատանքների հիմքում «Կաղնու ծառն» է, որը ռմբակոծվել է պատերազմի ընթացքում. հենց այդ փոքրաչափ էսքիզը դարձավ ցուցադրության մեխը: Ռմբակոծությունների հետևանքով ծառի բնի վրա մնացել են մի քանի ճյուղ, սակայն կաղնին կանգուն է որպես բազմաչարչար ժողովրդի գոյության և զարթոնքի խորհրդանիշ:

Ինչպես վերևում ասվեց, ցուցադրվող ստեղծագործությունները պատկերված են պատերազմական թեմաներով: Սակայն ինչն է այստեղ հետաքրքիր՝ դրանցում չկան մարտական գործողությունների, պայթյունների ու աղմկոտ այլ տեսարաններ: Այստեղ գերիշխողը խորհուրդն է, այստեղ արհավիրքը անմիջապես դիպչում է խաղաղ բնությանը՝ նրա գլխավոր ներկայացուցչին՝ ծառին, իսկ ծառը կանգուն է և կարծես շիրազյան լեզվով շշնջում է. «Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես»:

Դիտելով Սևադա Սարգսյանի ծառերի շարքը՝ ակամայից զուգահեռներ ես ուզում տանել հողածին մարդու միջև: Այստեղ, յուրաքանչյուր ծառ պատկերված է իր բնավորությամբ, իրեն հատուկ շարժումով: Ծաղկած թե մերկ վիճակում՝ նրանք արտահայտում են իրենց բնորոշ

վեհությունը, պատմում տարիների խորքից եկող կենսագրությունը:

Ծառը, որպես բազմամյա շնչող երևույթ, ի հայտ է եկել մարդկությունից էլ առաջ, հետագայում դառնալով արվեստագետների ներշնչանքի առարկա: Ծառերը, ինչպես նաև մարդիկ, շփվում են միմյանց հետ, իսկ զեփյուռի նուրբ քողի տակ կարծես պար բռնում: Այդպես ենք մենք տեսնում, այդպես ենք մենք պատկերացնում ծառերի էությունը: Սակայն անսահման է արվեստագետի երևակայությունը: Սարգսյանական ծառերը միայնակ են, նրանք վիրավոր են, բայց կանգուն, և ինչպես ժողովուրդն է ասում՝ «Ծառը խփելով չես գցի»:

Պատկերներում արվեստագետի եկխոսությունն է ծառի հետ: Նրանք լուռ են, նրանք վիրավոր են, և թեկուզ այդ կեցվածքով ու իմաստուն խորհրդով, հիշեցնում են մարդու ձեռքով կատարվող արհավիրքների մասին:

Ծանոթանալով արվեստագետի կյանքին և գործունեությանը՝ հասկանում ես, որ Սարգսյանը կերպարվեստի լեզվով բարձրացնում է նաև բնապահպանության հետ կապված հարցեր: Սույն ցուցադրությունում ասելիքը շատ ավելին է: Ներկայացվելիք աշխատանքների միջոցով հեղինակը ոչ միայն բնապահպանության խնդիրն է բարձրացնում, այլև մեր ինքնության շարունակության հարցը: Պատերազմից հետո կարծես նմանվել ենք սարգսյանական ծառերին՝ խոցված, կոտրված ճյուղերով և ճաքած բներով, բայց առողջ և խորը արմատներ ունենալով՝ կյանքը շարունակելու և ապրելու, հավերժ կանգուն մնալու պաթոսով:

Նկարչի սիրելի երանգը կապտականաչավունն է, որը կարելի է տեսնել նրա մի շարք աշխատանքներում: Դրանցում գերիշխող սառը երանգների խորքից դուրս է մղվում գլխավոր հերոսը՝ ծառը, և կարծես իր ճկուն ու սլացիկ կեցվածքով ջերմ ու կենդանի շունչ հաղորդում ստեղծագործություններին: Օգտագործելով ներկապնակի նրբին երանգները՝ Սարգսյանը հասնում է պատկերի լիրիկ և բանաստեղծական հուզականության: Ստեղծագործություններն էլ ավելի իմաստալից և հետաքրքիր են դառնում առկա խորհրդանիշներով, որոնք քո առջև խնդիր են դնում մտորելու և բացահայտելու իրենց գաղտնիքները: Հավերժության խորհուրդն արտահայտվում է փոքրիկ խաչերի տեսքով՝ որպես քրիստոնյա ժողովրդի արդար պայքարի, հավատքի դրսևորման և գոյատևման ապավեն, իսկ մեկընդմեջ երևացող թռչունները՝ խաղաղ օրվա իմաստը:

«Վիրավոր ծառեր» շարքում իրենց ուրույն տեղն ունեն փոքրաչափ քանդակները: Դրանք իրենց նյութերի զանազանությամբ՝ զսպանակաձև ոլորված երկաթ, փայտ, ապակի, ավելի հարստացնում են ստեղծագործությունների բովանդակությունը, իսկ իրենց վրա տեղ-տեղ երևացող պտուղները կարծես ավետարանական պատգամներ լինեն՝ տալով համահունչ ու ներդաշնակ տպավորություն: Առաջին հայացքից, կարծես թե բան չասող, առանձին վերցված որոշ դետալներ, իրենց կատարողական վարպետության ու միաձուլման արդյունքում խոսուն, իմաստալից տեսք են ստանում՝ հաղորդելով մտերմիկ և ջերմ տրամադրություն: Յուրաքանչյուր քանդակ առանձնանում է իր կառուցվածքով և նյութերով, ինչպես նաև փոքրիկ մասրենիներով, որոնք կյանքի շարունակման նշանն են: Հենց դրանց միջից է առանձնանում պատերազմի դաշտից բերված արկի բեկորից պատրաստված քանդակը:

Ի դեպ, մեր արվեստասեր հասարակությունը Սևադա Սարգսյանի աշխատանքներին ծանոթ է վաղուց: 2021 թվականին Հայ բարեգործական միության ցուցասրահում բացվեց նկարչի հերթական անհատական ցուցահանդեսը՝ «Դժոխքի ձոր» խորագրով, հենված պատերազմական հիշողությունների վրա: Այստեղ էր, որ այցելուների ուշադրությունը գրավեց նկարչի «Կրակի վրա դրված թեյնիկը» խորագրով գեղանկարը՝ տպավորիչ մի աշխատանք, որտեղ փոխանցվում է թե՛ պատերազմի սարսուռը, թե՛ կրակի ջերմությունը:

Ժամանակները պահանջում են նոր մոտեցումներ. ինչքանով են դրանք հասկանալի, ընդունելի և կամ որքանով է ճիշտ մեկնաբանվում՝ կդատի այցելուն: «Խոցված ծառեր» շարքն ունի հստակ ասելիք, որն անմիջապես դիպչում է դիտողի սրտին և մտքին: Նկարիչն ընդամենը մեկ ծառի միջոցով կարողացել է փոխանցել մի ամբողջ ազգի հոգեբանական պատկեր: Համոզված ենք՝ ներկայացված աշխատանքներն իրենց նշմարելի հետքը կթողնեն յուրաքանչյուրիս հոգում:

«Հաստա՛տ իմացեք, որ եթե ցորենի հատիկը հողի մեջ չընկնի և չմեռնի, ինքը կմնա որպես առանձին հատիկ, իսկ երբ մեռնի, բազմաթիվ հատիկներ կտա» (Հովհաննես 12:24):

Սիմա ԳՐԻԳՈՐՅԱՆՑ
Շողիկ ՂԱԶԱՐՅԱՆ
Արվեստի տեսության, պատմության և կառավարման բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողներ

ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

Ցուցահանդեսն ինքնաճանաչման ձև է

Ապրիլի 5-ին Գագիկ Ստեփանյանի անվան № 135 դպրոցում բացվեց «Ստեղծագործական ուղի» խորագրով լուսանկարչական աշխատանքների ցուցահանդես: Ցուցահանդեսը նվիրված էր Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի և Գագիկ Ստեփանյանի անվան №135 դպրոցի միջև կնքած համագործակցության հռչակագրի 1-ամյակին:

Ցուցահանդեսում ներկայացված էր ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի ուսանողների, շրջանավարտների և № 135 դպրոցի աշակերտների 65 լուսանկարչական աշխատանք:

Ցուցահանդեսի բացմանը ելույթ ունեցան դպրոցի տնօրեն Գարեգին Ներսեսյանը, ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչ Ռուբեն Երզինկյանը: Ցուցահանդեսի բացմանը հանդես եկավ № 135 դպրոցի տնօրեն Գարեգին Ներսեսյանը: Դպրոցի տնօրենը փաստեց՝ մեկ տարի առաջ ամբիոնի ու դպրոցի միջև կնքված համագործակցության հռչկագրի արդյունքում այսօր գեղարվեստական լուսանկարչության կրթության ասպարեզում ունենք մեծ հաջողություններ:

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի ամբիոնի վարիչ Ռուբեն Երզինկյանը հավելեց, որ լուսանկարչությունն առավել պահանջված գեղարվեստական արտահայտչամիջոցներից է՝ հասանելի հանրության լայն շրջանակին, հատկապես երիտասարդներին ու պատանիներին:

Ցուցահանդեսի կազմակերպիչ, նույն ամբիոնի դասախոս Արմեն Խաչատրյանն ասաց. «Երիտասարդների ու պատանիների շրջանում պետք է զարգացնել գեղագիտական ու էսթետիկական մոտեցումը գեղարվեստական լուսանկարչությանը՝ արտադասարանական ժամերի միջոցով դպրոցում ուսուցանելով գեղարվեստական լուսանկարչության արտահայտչամիջոցները և կարևորելով լուսանկարչական էթիկայի նորմերը»:

ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը ողջունեց ցուցահանդեսի մասնակիցներին և ներկայացրեց Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի և Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի համատեղ աշխատանքը, որի արդյունքում ստեղծվեց 44-օրյա պատերազմում ֆակուլտետի զոհված ուսանողներին նվիրված լուսանկարչական պաստառը: Վերջինս կարևորեց լուսանկարչության անկրկնելի դեր պատմական էջերը լուսաբանելու տեսանկյունից:

Ցուցահանդեսին մասնակցում էր «Տաթևեր» երգիպարի համույթը, ղեկավար՝ Տաթև Բարդեղմոսյան: Ցուցահանդեսի հյուրն էր ՀՊՄՀ Երաժշտության ամբիոնի պրոֆեսոր, քանոնահարուհի Հասմիկ Լեյլոյանը:

Ցուցահանդեսի բացմանը և ընթացքում դպրոցի էկրաններին ցուցադրվեցին դպրոցի և Մանկավարժական համալսարանի համագործակցությունը, նաև բուհի պատմությունը ներկայացնող լուսանկարներ:

«Այս անգամ ոչ թե դիմանկարներ, այլ բնապատկերներ էին իմ աշխատանքներում,-մեզ հետ զրույցում ասում է ՀՊՄՀ Գեղարվեստական լուսանկարչության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Արփի Կարապետյանը:- Նման ցուցահանդեսները շատ մեծ նշանակություն ունեն ուսանողի համար: Կարելի է ասել, կատարած աշխատանքի ամփոփումն է: Բացի այդ, դրանք խթանում են ուսանողների ստեղծագործական աշխատանքը. երբ տեսնում եմ իմ նկարած լուսանկարները պատին փակցված՝ ուզում եմ էլ ավելի նոր ու լավ գործեր ստեղծել»:

Շողեր ՍՏԵՓԱՆՅԱՆ
Հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանող

Ցուցահանդեսն ունի նաև էլեկտրոնային տարբերակներ ASPU Photo Gallery-ում՝ QR կոդով, Facebook-յան էջ՝ «Ստեղծագործական ուղի» Instagrm stexcagorcakan_uxi:

Ծաղկազարդը Դսեղում

Այս տարի Ծաղկազարդը Հայ Առաքելական եկեղեցին նշեց ապրիլի 2-ին: Տոնը նշվում է Սուրբ Զատկին նախորդող կիրակի օրը, որը նշանավորում է Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ:

Ծաղկազարդի առավոտյան եկեղեցիներում օրհնում են ուռենու և ձիթենու ճյուղերը և բաժանում ներկաներին, մատուցվում է պատարագ: Դսեղ գյուղի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու քահանա Տեր Գրիգորիս Դերմենջյանի խոսքով, այդ օրը բացի Ծաղկազարդից, նշում են նաև մանուկների օրհնության օրը:

«Տարվա ընթացքում գրեթե բոլոր արարողակարգերն ու ծիսակարգերը պատշաճ կատարվում են գյուղի եկեղեցում: Երբ ծառայության անցա որպես Դսեղի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ, գյուղում եկեղեցական արարողությունների մասնակիցների թիվը բավականին փոքր էր: Բայց հիմա փոփոխություն կա, հատկապես Սուրբ ծննդյան օրը, Ծաղկազարդի, Սուրբ Հարության և մյուս մեծ տոներին,- ասում է քահանան:-Երբ մեր Տերը մտավ Երուսաղեմ, նրան ժողովուրդը դիմավորեց որպես թագավորի և նրա առջև փռեց զգեստներն ու արմավենու ճյուղեր, որի նպատակն իրենց մեղքերը Քրիստոսին խոստովանելն էր: Քանի որ Հայաստանում արմավենին տարածված չէ, մենք որպես խորհրդանիշ օգտագործում ենք ուռենու ճյուղերը,- ասում է Տեր Գրիգորիսն ու ավելացնում, որ մանուկների օրհնության օրը այս տոնի հետ միավորել են, քանի որ Աստված շատ էր սիրում և կարևորում մանուկներին և Ավետարանական հատվածում ասում է, որ նրանցն է Երկնքի արքայությունը, այդ իսկ պատճառով էլ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցում հատուկ ուշադրության են արժանանում նաև մանուկները»:

Նունե Բեժանյանը, որը եկեղեցու ոչ մի պատարագ բաց չի թողնում, ասում է, որ այս օրն իր համար շատ կարևոր նշանակություն ունի. «Տոնը ինձ համար գարնան զարթոնքն է խորհրդանշում»: Երբ արդեն նոր ճյուղերով պսակ եմ ունենում, նախորդ տարվանը այրում եմ, ու այնուհետև, այս ճյուղերը ուղիղ մեկ տարի պահում, որ տունը նույնպես օրհնված լինի»,-ասում է նա:

10-րդ դասարանի աշակերտուհի Լաուրա Վանյանն էլ, որը երգչախմբի անդամ է, նշում է, որ իր ընտանիքից ոչ ոք հիմնականում պատարագների չի մասնակցում, բայց ինքն արդեն 2 տարի անընդմեջ ներկա է գտնվում դրանց, նաև երգում:

«Ծաղկազարդի օրն առանձնահատուկ եմ սիրում, այն ինձ համար ոչ միայն եկեղեցական տոն է, ես այն ասոցացնում եմ բարության ու գարնան հետ,- ասում է դպրոցական աղջիկն:- Ամեն անգամ չի ստացվում, բայց Ծաղկազարդին իմ ընկերներից շատերն ինձ հետ գալիս, մասնակցում են պատարագին ու օրհնության արարողությանը, զգացել եմ, որ իրենք էլ են արդեն հասկանում տոնի խորհուրդը»:

Հավելենք նաև, որ Ծաղկազարդի նախօրեին՝ շաբաթ օրը, կատարվում է նախատոնակ, բացվում է խորանի վարագույրը, իսկ հաջորդ օրը տոնական Սուրբ Պատարագը մատուցվում է բաց վարագույրով:

Սյուզաննա ԽԱՌԱՏՅԱՆ
Հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանող

Տոնի խորհրդին ընդառաջ, թե՞ պուրք եվրոպականին

Հինգ տաղավար տոներից մեկը՝ Քրիստոսի հարության տոնը՝ Սուրբ Զատիկը, իր խորհրդով շատերի կողմից այսօր իմաստազրկվել ու հետին պլան է մղվել: Ինչպե՞ս են այսօր նշում Սուրբ Զատիկը: Գունավոր ներկված ձվերից մինչև սեղանի աքսեսուարներ, դեկորներ ու ավելորդ ճոխություն:

Արևմտյան Եվրոպայից եկած ավանդույթները՝ ճագարի ձվիկներով, խաղալիքներով ու շոկոլադե բներով այսօր Հայաստանում ավելի արդիական են, քան հենց հայկական ավանդույթները:

«Ուշադրությունը կենտրոնացնելով ավելորդ զարդարանքների վրա՝ կորչում է տոնի իրական խորհուրդը»,- նշում է ձեռագործ աշխատանքներով զբաղվող Սանամ Մարտիրոսյանը, հավելելով, որ հայերն այսօր հետևում են Եվրոպայի օրինակին՝ հեռանալով արմատներից:

«Ի՞նչ կարիք կա սեղանին ունենալ մի քանի կուլիչ, որը սլավոնական արմատներ ունի, և չունենալ կարմիր ձու, որի խորհուրդը շատ հստակ է»: Ըստ Սանամ Մարտիրոսյանի, գունավոր ու կպչուն ժապավեններով զարդարված ձվերը փոքր տարիքից են երեխաների մոտ տպավորվում ու հետագայում հեռացնում սերնդին տոնի իրական արմատներից:

Երեք երեխաների մայր Անի Ազատյանն էլ կարծում է, որ պետք է երեխաներին բացատրել և՛ տոնի խորհուրդը, և՛ հետաքրքիր ու գունավոր նշել այն:

«Սա ընտանեկան տոն է, կարող ենք օրը սկսել ճրագը տուն տանելով՝ այն կերուխումի վերածելու փոխարեն, ինչպես ամանորին ենք անում»,-ավելացրեց Անի Ազատյանը:

Ասում են, օրվա խորհուրդը, ինչու չէ, մոռացվում է նաև թանկացումներով պայմանավորված, հավատացյալներն էլ ձուկը, կանաչեղենն ու գինին փոխարինում են շոկոլադե տորթերով, նապաստակներով ու ալկոհոլային այլ խմիչքներով: Անցնելով նորին, պետք է չմոռանալ ու պահպանել հնուց եկած սովորույթներն ու ավանդույթները:

Լիլիթ ԱՃԵՄՅԱՆ
Հեռուստառադիոլրագրության 3-րդ կուրսի ուսանող

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Ուսուցիչ դառնալու ճանապարհին

Շատերն իմանալով, որ սովորում եմ Հայկական պետական մանկավարժական համալսարանում, զարմանում են ու հարցնում, թե ինչն է ինձ դրդել ընդունվել այս համալսարան: Երևի, առաջին հերթին, մարդկանց զարմացնում է արտաքին տեսքս՝ մազերիս փոփոխական գույները, դաջվածքներս, հագնվելուս ոճը, բայց արտաքին տեսքը ոչ գիտության վրա է անրադառնում, ոչ սովորելու և ոչ էլ սովորեցնելու: Չգիտեմ կարծրատիպերը երբ հասան կրթությանը, բայց ես միշտ կոտրել եմ ու կշարունակեմ կոտրել այդ կարծրատիպերն ու կապացուցեմ, որ ոչ մազերի գույնը, ոչ հագուկապը ու ոչ էլ դաջվածքները հայրենասեր, խելացի, վերլուծող, մտածող սերունդ դաստիարակելու և կրթելու հարցում դեր չեն խաղալու և, ամենակարևորը, ապագա աշակերտներիս առաջին բանը, որ կսովորեցնեմ, այն կլինի, որ երբեք մարդուն չի կարելի դատել արտաքին տեսքով:

Ինչևէ, շուրջ երեք տարի ինքս չեմ հասկացել, թե ինչ եմ անում այս համալսարանում, որն է այստեղ սովորելուս իմաստը կամ առաքելությունը: Երբ հանձնարարում էին գրել էսսե՝ ինչու եմ ընտրել ուսուցչի մասնագիտությունը, դժվարանում էի գրել, մտքերս չէի կարողանում դասավորել, ընտրությանս վրա կասկածում էի ու մտածում, որ սխալ մասնագիտություն եմ ընտրել, բայց երեկ վերջապես հասկացա ու, բացի հասկանալուց , արդեն այն հարցին, թե ինչու եմ սովորում հենց այս համալսարանում, հանգիստ կարող եմ պատասխանել:

Բոլորդ էլ գիտեք՝ միշտ չէ, որ ամեն բան առաջին անգամից է ստացվում: Առաջին անգամ դաս տալու փորձը ձախողվեց. շատ լարված էի, չգիտեի ինչ խոսեի, ինչ անեի, որ երեխաները իրենց լավ զգան, չձանձրանան, և բացի դրանից էլ, լարվելուս պատճառն այն էր, որ ֆորս մաժորային իրավիճակ ստացվեց, որը հանգեցրեց խառնաշփոթի: Դասարանից դուրս եկա անտրամադիր, հիասթափված ու ինչու չէ՝ նաև փոքր-ինչ վրդովված, որովհետև չէի սպասում, որ այդպես կստացվի: Խուսափում էի ու չէի ուզում էլ դաս տալ, բայց դպրոցի ուսուցիչներից մեկը, ով մեր համալսարանում մագիստրոս էր, ասաց՝ չհիասթափվես, դա ամենակարևոր բանն է, որից հետո փոքր-ինչ հանդարտվեցի: Ինչևէ, երեկ արդեն դասավանդելուս երկրորդ փորձն էր: Պատասխանատվությունից փախչելով և համապատասխան փորձ չունենալու պատճառով որոշեցի դասավանդել 6-րդ դասարանում: Կյանքում այդքան լարված զանգի ձայնին չէի սպասել: Զանգը տվեց, երեխաները ոտքի կանգնեցին, նրանց դասավանդող ուսուցչուհին ասաց, որ նրանց դասն այսօր ընկեր Դավթյանն է անցկացնելու: Եվ ուրախ էի, և տխուր, և էլ չէի գիտակցում, որ հասել եմ այն կարգավիճակին, որ ուղղակի **Դավթյան** ազգանվանս կողքին ավելացավ նաև **ընկերը**, բայց չէ՞ որ **ընկեր** բառն իր մեջ բազմաթիվ պատասխանատվություն ու իմաստ է պարունակում: Պետք է գիտակցես, որ առաջին հերթին քո աշակերտի ընկերն ես, հետո նոր ուսուցիչը: Երեխաներին պատմում էի հին Հայաստանի տնտեսության մասին. դուք պետք է տեսնեիք առաջին շարքի նստած աղջկա հիացած ու հետաքրքրված հայացքը: Ամբողջ դասի ընթացքում նրան նայելով՝ ջերմություն էի զգում ու ինձանից անկախ ժպտում: Միգուցե հենց նրան նայելով հիշում էի ինձ իր տարիքում ու մի պահ ուզեցի հայտնվել նրա տեղում, ոչ թե անհոգ մանկություն ունենալու, այլ ինձ կողքից տեսնելու համար, տեսնելու համար, թե ինչպես այն աղջիկը, ով ամբողջ կյանքում դպրոց սիրով չի գնացել, այսօր մեծ եռանդով, սիրով ու պատասխանատվության զգացումով նորից մտել է դպրոց, բայց ոչ թե սովորողի կարգավիճակով, այլ՝ սովորեցնողի: Անկեղծ ասած՝ ամբողջ դասի ընթացքում մտքումս դպրոցիս պատմության ուսուցչուհու խոսքերն էին պտտվում, երբ բղավում էր վրաս ու ասում, որ չսովորելով ոչնչի չեմ հասնի, համալսարան չեմ ընդունվի, բայց նա երկու տարի ինձ դասավանդելուց հետո էլ անգամ չհասկացավ, որ ոչ թե ես չեմ ցանկացել սովորել, այլ նա է դասավանդել այնպես, որ ես չեմ ցանկացել սովորել: Նա չէր գիտակցում, որ իր մասնագիտությունը պատասխանատվություն, նվիրում, համբերություն էր պահանջում: Չէր գիտակցում, որ իր ֆինանսական և ընտանեկան խնդիրները պետք չէ դասարան բերել, որովհետև մենք ամեն ինչ զգում ու հասկանում էինք: Չեմ հասկանում, թե ոնց կարելի էր «Հայոց պատմություն» առարկան այդքան ձանձրալի դասավանդել. ոչ մի մեթոդ, ոչ մի նորություն, ոչ մի մոտեցում: Միայն անհիմն բղավոցներ ու մեղադրանքներ...

Նրա դասերի ժամանակ միշտ մտածում էի՝ եթե օրերից մի օր հանկարծ որոշեմ դառնալ մանկավարժ, նա կլինի այն մանկավարժի օրինակը, որին երբեք չեմ նմանվի, իսկ մյուս կողմից էլ մտածում եմ՝ իմ մասնագիտություն ընտրելու հարցում ամենամեծ ներդրումը հենց ինքն է կատարել, ցույց տալով, թե ապագայում ինչ սխալներ չպետք է թույլ տամ և որ աշակերտներիս վիրավորելու փոխարեն միշտպիտի ողջունեմ յուրաքանչյուրի ընտրությունն ու ամեն կերպ աջակցեմ նրանց...

Սաբինա ԴԱՎԹՅԱՆ
Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի պատմության բաժնի 3-րդ կուրսի ուսանող

Ջավախքի վրձինը՝ Համլետ Արոյանի ձեռքին

Գեղանկարիչ Համլետ Արոյանի շնորհն ու տաղանդն ի հայտ է եկել դեռ երեք տարեկանում և ակունքվում է հայրենի բնաշխարհից՝ Ջավախքից: Նա մեկն է այն ջավախցիներից, ում կենսագրությունն ու ստեղծագործությունը սերտորեն ձուլված է ծննդավայրին ու նրա հայրենակիցներին, նրա չքնաղ ու եթերային բնությանը:

Ստեղծագործություններում արվեստագետի հոգին է, զգացումը, տրամադրությունը և կյանքի հանդեպ նրա ունեցած լավատեսական շունչը, որին հաղորդակցվում է դիտողը: Նրա գործերը ձգողական ուժ ունեն, որ հարգանք է ներշնչում արարողի հանդեպ ու մեկ քայլ անելուց առաջ ստիպում խորհել, թե ինչ լայն, խորը և հետաքրքիր ներաշխարհ ունի գեղանկարիչը, հոգու հարուստ ներկապնակ, որում գերիշխողը կապույտն է, նրա՝ ամենահաճախ օգտագործած գույնը, անսահմանության և հավերժի գույնը: Ամենակարևորը, յուրաքանչյուր ստեղծագործության մեջ իր հոգու արևն է, ինչպես արևածագը Աբուլի ճերմակազարդ գագաթին:

Համլետ Արոյանը արվեստագետ է, որի ամեն խոսքում Ջավախքի բնությունն ու պատմությունը կենդանանում է, ինչպես իր հրաշք կտավներում: Դրանցից անհնար է ակնթարթ իսկ կտրվել, ուզում ես շարունակ նայել, փնտրել խորհուրդն ու անբացատրելին, առեղծվածայինն ու խորհրդավորը: Նրա հավերժական բնությունն ապրեցնում է: Ջավախքի բնության հեքիաթային պատկերները գերում են կախարդական ուժով ու գույնով, երանգի ճիշտ արտացոլանքով և արտահայտչանքով:

Ջավախքյան է նրա արվեստը: Դա գեղեցիկի, բարու և լուսավորի զգացական աշխարհն է: Վարպետն իր հոգու ջերմությունն ու լույսն է թողել իր պատկերած աշխարհում, իր խոստովանանքը: Դրանք ոգեղեն են, արարված գեղանկարչի շնորհալի ձեռքով ու ամենատես աչքով, նրա գերզգայուն սրտով: Նրա հետ ամեն զրույցով ջավախքոտ է դառնում օրը, ու հասկանում ես, որ ուր էլ գնաս՝ կարոտելու ես Ջավախք աշխարհը:

Ի՞նչն է պատճառը, որ վարպետի կտավների կապույտն ապրում է նույնիսկ հիշողությանդ մեջ, չի մեռնում, չի տարրալուծվում, այլ հավերժանում է…

Ու մտորում ես կապույտն այդպես տեսնելու և արտահայտելու նրա տեսակի մասին: Տեսնես ինչի՞ց է, որ արվեստագետի մոտ այդ կապույտն այնքա՜ն շատ է, այնքան սիրելի, այդքան հետաքրքիր ու յուրօրինակ տարբեր:

Էսթեր ՏԵՊԻԿՅԱՆ
ՀՊՄՀ հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանող

Պրակտիկան մեծ փորձ է կարևորի ճանապարհին

«Կրթության հիմնական նպատակը հայելիները պատուհաններ դարձնելն է»,- ասել է Սիդնեյ Ջ. Հարիսը :

Լսարանային դասերից այն կողմ մի ուրիշ աշխարհ է: Երբ բացվում են վարագույրները, դու արդեն ուսուցիչ ես: Միայն գիտելիքներ ունենալը շատ քիչ է ուսուցիչ համարվելու համար, պետք է և կարողանալ կիրառել այն: Հենց դրան է ծառայում մանկավարժական պրակտիկան, որը հնարավորություն է տալիս որպես ուսուցիչ ինքնադրսևորվելու, արտոնելու սեփական ուժերը:

Մանկավարժական պրակտիկան ընթանում է մի քանի փուլով, առաջին փուլը կոչվում է ուսումնաճանաչողական, որի ընթացքում հնարավորություն է տրվում ծանոթանալ դպրոցին իբրև կառույցի: Այս ընթացքում մենք՝ ապագա ուսուցիչներս, փորձում ենք ներկայանալ որպես մանկավարժ՝ համոզվելով, թե դպրոցն արդյո՞ք այն վայրն է, որտեղ զինվորագրվել ենք ծառայելու:

Պրակտիկայի ամենից գեղեցիկ փուլը կիրառականն է, որի ընթացքում հնարավորություն ենք ձեռք բերում ներկայացնել մեր ունեցած գիտելիքները՝ դասեր վարելով:

Ես բակալավրի կրթական ծրագրում ավարտել եմ մանկավարժական պրակտիկայի բոլոր փուլերը, կարողացել եմ վարել հաջողված դասեր, որոնց ընթացքում ձեռք եմ բերել աշակերտների սերն ու հարգանքը: Մանկավարժական գործընթացը մի ամբողջ համակարգ է, որի ընթացքում անհրաժեշտ է փոխադարձ համագործակցություն, կապական մի շղթա, որը կազմված պետք է լինի ուսուցիչ-աշակերտ-ծնող եռանկյունուց: Պրակտիկան մեծ փորձ է կարևորի ճանապարհին, երբ մի քայլ է քեզ բաժանում աշակերտ և ուսուցիչ լինելուց, պարտավորեցնող է, որովհետև մենք երբեք էլ չենք կարողանա առաջին անգամ դասարան մտնել և վարել առաջին դասը: Կարևոր է սիրել մասնագիտությունը, որն ընտրել ես: Ես բանասեր եմ, և մանկավարժ լինելն իմ առաքելությունն է:

Մերի ԱՌԱՔԵԼՅԱՆ

Սուրբ կապիկը՝ Արագածում

«Քրիստոս Հարյավ ի մեռելոց, Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի» խոսքերով Տեր Մաղաքիա քահանա Գևորգյանը Արագածի Սուրբ Աստվածածին եկեղեցում սկսեց Սուրբ Զատկի պատարագը:

Զատիկը շարժական տոն է.Հայ Առաքելական եկեղեցին այն նշում է մարտի 22-ից ապրիլի 26-ն ընկած ժամանակահատվածում: Զատկի նախօրեի երեկոյան Հայաստանի բոլոր եկեղեցիներում մատուցում են Ճրագալույցի պատարագ, որն ազդարարում է Զատկի տոնակատարության սկիզբը:

Ներկված ձվեր, կանաչեղեն, բրնձով, չամչով և չորամրգերով փլավ, ձուկ և գինի: Տեր Մաղաքիա քահանա Գևորգյանի խոսքով՝ պատահական չեն ընտրված թեթև ուտեստները, քանի որ տոնին նախորդում է Պահքի շրջանը:

«Եթե մարդիկ առողջ են, կարող են ուրբաթ երեկոյից ոչինչ չուտել, իսկ շաբաթ երեկոյան, Ճրագալույցի պատարագին հաղորդություն առնելուց հետո, համտեսել զատկական ուտեստները»,-ասում է Տեր Մաղաքիա քահանա Գևորգյանը և հավելում, որ կարելի է շաբաթ օրվա երեկոյից սկսել պահք պահել և հաղորդություն առնել կիրակի՝ Զատկի պատարագին:

Զատիկը տարբեր երկրներում նշվում է յուրովի: Իսպանական Վերժես քաղաքում Սուրբ հինգշաբթի օրը կազմակերպում են «մահացու պար» կոչվող բեմադրությունն: Մարդիկ հագնում են «կմախք» հիշեցնող կոստյումներ և պարում: Պարը սկսվում է կեսգիշերին և տևում 3 ժամ:

Երուսաղեմում մարդիկ ուրբաթ օրը քայլում են այն ճանապարհով, որով Հիսուսն է անցել իր խաչելության օրը:

Լեհաստանի որոշ շրջաններում Զատկի տոնը նմանվում է հայկական վարդավառի. մարդիկ միմյանց վրա ջուր են ցողում, այդ ավանդույթը կոչվում է Սմինգուս -Դինգուս: Այն աղջիկն, ով ջրվեց՝ այդ տարվա ընթացքում, ըստ ավանդույթի, ամուսնանում է:

Վիոլ ՈՍԿԱՆՅԱՆ
ՀՊՄՀ Հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանող

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ